55-ՐԴ ՆԻՍՏ

3 հունվարի 1919թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են արտաքին գործոց, խնամատարության, զորական, իրավարարության մինիստրները: Ներկա է և Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում՝ Ա. Ջամալյանը:

Դ. Զուբյան - Կարդում է նախորդ նիստերում ընդունված օրինագծերը՝ խմբագրված ձևով:

Խորհրդարանը վերջնականապես հաստատում է այդ օրինագծերը և ընդունում իբրև օրենք:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է խնամատարության մինիստրության նախահաշվի մասին, որ և խորհրդարանն ընդունում է Գ. ընթերցումով և հանձնում խմբագրական հանձնաժողովին:

Զորական մինիստր - Զեկուցում է ռազմաճակատի դրության՝ հունվարի 1-ից սկսած, և դաշնակիցների առաջարկած պայմանների վերաբերյալ գեներալ Սիլիկյանի հեռագրի մասին:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է բծավոր տիֆի դեմ կռվելու համար խնամատարության մինիստրության անունով մեկ միլիոն ռուբ. վարկ բանալու օրինագծի մասին:

Խնամատարության մինիստր - Շեշտում է համաճարակի ահռելի չափը և անխոչընդոտ ծավալումը, որի դեմ կռվելու համար իբրև միջոց անհրաժեշտ է համարում բաց անել հիվանդանոցներ, հնարավորություն տալ գաղթականության մնացորդներին հեռանալու քաղաքից՝ առաջուց բաղնիս ուղարկելով նրանց և հագուստները Գիլիառի ապարատով ախտահանելով:

Երևանում այժմ կան մոտավորապես 2.100 հիվանդ բծավոր տիֆով. անհրաժեշտ է առայժմ բաց անել հիվանդանոց գոնե 1.000 մահճակալով:

Քաղաքումս կան ամառվանից մնացած և խոլերային բացիլներ: Եթե հենց այժմյանից չաշխատենք ոչնչացնել այդ բացիլները, գարունը բացվելուն պես կսկսվի և խոլերայի համաճարակը:

Քաղաքային վարչությունը հնարավորություն չունի ախտահանելու և մաքրելու քաղաքը, ուստի և այդ աշխատանքը խնամատարության մինիստրությունը վերցնում է իր վրա:

Խորհրդարանը հիշյալ օրինագիծը ընդունում է Գ ընթերցումով և վերջնականապես հաստատում իբրև օրենք:

Ն. Աղբալյան - Զեկուցում է պետական կոնտրոլի նախահաշվի մասին:

Խորհրդարանն ընդունում է օրինագիծը Գ ընթերցումով և հանձնում խմբագրական հանձնաժողովին:

Հ. Ազատյան - Առաջարկում է լրացուցիչ մի նախահաշիվ մեկ միլիոնի, խնամատարության մինիստրի անունով, քաղաքիս չքավոր դասի համար (ոչ գաղթական) սննդատու կայաններ և ծրի թեյարաններ բաց անելու և հիվանդներին մաքուր կաթ մատակարարելու համար կովեր գնելու:

Խնամատարության մինիստր - Եթե խորհրդարանը վարկ բաց կանի հիշյալ մտքով, մինիստրությունը մեծ ուրախությամբ հանձն կառնի բաց անել: Շատ ցանկալի է սեփական կովեր ունենալ, սակայն հնարավոր չէ խոտի պակասության պատճառով:

Քաղցրեղենի նյութերը չեն կարող ազդել ընդհանուր կենսամթերքների վրա:

Ս. Վրացյան - Գեղեցիկ միտք է քաղաքի չքավոր դասին օգնության հասնելը, սակայն պետք է աչքի առաջ ունենալ և գյուղերի չքավորների դրությունը, որոնք մեռնում են, շատերն էլ սովամահության շեմքին են կանգնած: Ցանկալի է, որ

խնամատարության մինիստրությունը վարկ խնդրի և գյուղերի չքավորներին սովամահությունից փրկելու համար:

Նախագահ - Առաջարկում ենք խնամատարության մինիստրին՝ արված առաջարկների հիման վրա ներկայացնել լրացուցիչ մի օրինագիծ:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է ներքին գործոց մինիստրության նախահաշվի բժշկա-սանիտարական մասի նախահաշվի մասին, որն արդեն անցել է խնամատարության մինիստրության:

Նախահաշիվն ընդունվեց խորհրդարանի կողմից և հանձնվեց խմբագրական հանձնաժողովին:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 1-ին:

«Զանգ», 19 հունվարի 1919թ.